

դեգերէր. եւ ընդհանրապէս այսպիսի յա-
խուռն քայլ մը անմիաբան պիտի ըլլար Մով-
սէսի բնաւորութեան, որ գիտէր նման դէպ-
քերու մէջ ընթանալ իմաստուն եւ խոհեմ ըն-
թացքով: Ինչպէս Կաթողիկոսին առ Ուր-
բանոս Ը. գրած թուղթէն կը տեսնուի, Մով-
սէս կանչած էր զՆիկիոյ իւր քով:

Կեսարացոյ բանադրանաց գիրը ահաւոր
իրարանցում պատճառեց ի Լվով, ուր ժողո-
վուրդը տագոհ էր արդէն իւր առաջնորդէն:
Իսկ եպիսկոպոսը արհամարհեց անոր սպառ-
նալիքներն ու նզովքները.

Զբանադրանքն նորա չբռնեց.

Զթուղթն ի յանարգ տեղի ձգեց.

Յեկեղեցին համարձակեց,

Առջեւ խորանին աղօթեց:

Բայց ոչ այսպէս ժողովուրդը: Մասամբ
գրգռուած եպիսկոպոսի հակառակորդներէն
եւ մասամբ վախնալով Վարդապետին բանա-
դրանքէն սկսաւ ժողովուրդը տակաւ տակաւ
հեռանալ եպիսկոպոսէն եւ չյաճախել եկեղե-
ցին:

Որպէս զի խաղաղութիւնն վերահաստա-
տուի եւ ժողովուրդին խիղճը հանդարտի,
խորհուրդ տուին իմաստուն մարդիկ եպիս-
կոպոսին, որ երթայ անձամբ Կեսարացոյն եւ
բանադրանքէն արձակում խնդրէ: Ժողո-
վուրդը յանձն առաւ հոգալ ճանապարհի
ծախքը: Նիկիոյ մեկնեցաւ դէպի Կեսարիա, ուր
կը գտնուէր Վարդապետը: Հասնելով Պրու-